ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՎԻ ԽՆԴԻՐԸ

Նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը կնշի իր ազգային տոնը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձը։

Սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք բերեց ոչ միայն իր երազած ազատ ու երջանիկ կյանքը, այլև ստացավ հայրենական գիտությունը զարգացնելու անսահման հնարավորություններ։ Հազարամյակների պատմություն, կուլտուրական հարուստ ժառանգություն ունեցող հայ ժողովուրդը միայն Սովետական իշխանության օրով կարողացավ ստեղծել իր Գիտությունների ակադեմիան, որի սիստեմում ներկայումս գործում է 22 գիտահետազոտական միավոր, ավելի քան 540 գիտական աշխատողներով։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ազգային ջոկատներից մեկը, շրջապատված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարությամբ, դարձել է մեր ռեսպուբլիկայի գիտական մտքի կենտրոնը, նրա պարծանքը։ Այստեղ է համախմբված գիտության ամենատարբեր բնագավառների մեր թե՛ փորձառու, և թե՛ երիտասարդ կադրերի մեծ մասը։ Հայկական ակադեմիան պարծենում է իր շատ գիտնականներով, որոնք համ–միութենական և համաշխարհային հռչակ ունեն։

Ակադեմիայի բաժանմունքների և ընդհանուր ժողովի նիստերում օրերս տեղի ունեցան նոր ակադեմիկոսների և թղթակից-անդամների ընտրություններ։

Ընտրությունների արդյունքներն արդեն հայտնի են։ Մեր հասարակայնությունը ուրախ է իր ակադեմիայի իսկական անդամների շարքերում տեսնելու բազմավաստակ արվեստագետ, գույների կախարդ վարպետ Մ. Ս. Սարյանին, հայկական բանասիրության խորագիտակ Ա. Բ. Կարինյանին, տաղանդավոր մաթեմատիկոս Մ. Մ. Ջրբաշյանին, ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողներին և մասնագետների շրջաններին լավ հայտնի Մ. Վ. Կասյանին, Ս. Ս. Մկրտչյանին, բժշկական պրակտիկայի անխոնջ գործիչ, անվանի մասնագետ Բ. Ա. Ֆանարջյանին, գյուղատնտեսության և բիոլոգիական գիտությունների բազմավաստակ գործիչներ Գ. Խ. Աղաջանյանին և Մ. Ա. Տեր-Կարապետյանին։ Ահա և նորընտիր ակադեմիկոսներից ամենակրտսերը՝ Սերգեյ Մերգելյանը։ Արտակարգ տաղանդով օժտված այս երիտասարդը 28 տարեկան հասակում կանգնեց գիտական գործունեության երկարամյա ճանապարհ անցած գիտնականների կողքին, հրապարակի վրա դնելով իր ծանրակշիռ գիտական աշխատանքը։

Ակադեմիայի թղթակից-անդամներ են հաստատվել Հ. Ն. Աղաջանը, Գ. Գ. Սեակը, Վ. Հ. Ռշտունին, Մ. Մ. Մկրյանը, Ս. Ա. Համբարձումյանը, Ն. Մ. Քոչարյանը, Է. Հ. Դավթյանը, Հ. Կ. Փանոսյանը, Ա. Հ. Գաբրիելյանը, Մ. Գ. Մանվելյանը, Վ. Մ. Թանը, Մ. Գ. Սիրոյանը, Ա. Թ. Բաբայանը, Մ. Զ. Սիմոնովը։ Այս գիտնականներից ամեն մեկն իր խոսքն է ասել գիտության այն բնագավառում, որին զինվորագրվել է։ Նրանց մեծագույն մասը, բացի գիտահետազոտական բեղմնավոր գործունեությունից, ունի նաև մանկավարժական աշխատանքի պատկառելի փորձ, իր ուժերը ներդրել է մեր երիտասարդության կրթության և դաստիարակության շնորհակալ գործում։

Երեկ տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի, վիցե-պրեզիդենտների և նախագահության անդամների ընտրությունները։ Ակադեմիայի պրեզիդենտի պոստում նորից ընտրվեց ակադեմիկոս գիտնական Վիկտոր Համբարձումյանը։

Շնորհավորում ենք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նոր ակադեմիկոսներին, թղթակից-անդամներին և ակադեմիայի ղեկավարությանը՝ մեծ վստահության և բարձր պատվի արժանանալու առթիվ և ցանկանում ենք նրանց բեղմնավոր աշխատանք, նորանոր հաջողություններ ի փառս մեր սովետական գիտության։

Բարձր պատիվը պարտավորեցնում է, ընկեր գիտնականնե՛ր։ Ժողովուրդը լուրջ սպասելիքներ ունի ձեզանից։ ՍՄԿՊ XX համագումարը խնդիր դրեց ամեն կերպ ամրապնդել երկրի գիտական հիմնարկների կապը արտադրության հետ, ժողովրդական տնտեսության կոնկրետ պահանջների հետ, նրանց ստեղծագործական ջանքերը կենտրոնացնել գիտա-տեխնիկական առավել կարևոր պրոբլեմների լուծման վրա, անշեղորեն բարձրացնել գիտության դերը կոմունիստական շինարարության պրակտիկ խնդիրների լուծման գործում։

Չի կարելի բավարար համարել արտադրության հետ մեր գիտության աշխատողների կապը։ Մեր արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողները, որոնք անձնվեր աշխատանք են կատարում ժողովրդական տնտեսության զարգացման համար, մեծապես զգում են մեր գիտնականների օգնության կարիքը։ Սովետական գիտնականը չի կարող պարփակվել գիտական հաստատության պատերի մեջ։ Նրա պարտքն է, ազնիվ պարտքը՝ լինել այնտեղ, որտեղ ստեղծվում են նյութական բարիքները՝ գործարաններում, հանքերում, կոլտնտեսություններում, սովորեցնել և միաժամանակ սովորել աշխատանքի մարդկանց, իր գիտելիքները ստուգել պրակտիկ փորձով և ի սպաս դնել ժողովրդական տնտեսության զարգացմանը։ Այս է պահանջվում սովետական գիտնականից։ Սովետական գիտությունը, մեր գիտնականները պետք է գտնվեն պարտիայի XX համագումարի պահանջների մակարդակի վրա։

Կասկած չկա, որ Հայաստանի գիտնականները, ուղեցույց ունենալով ՍՄԿՊ XX համագումարի պատմական որոշումները, իրենց բոլոր գիտելիքներն ու եռանդը կնվիրաբերեն մեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի հետագա ծաղկման ու բարգավաճման գործին։

Դա նրանց պատվի խնդիրն է։